ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2008 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2009

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, ՀՀ նախագահի հրամանագրերով, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներով, ՀՀ կառավարության գործունեության ծրագրով և դրա իրագործումն ապահովող միջոցառումներով, ինչպես նաև նախարարության կանոնադրությամբ 2008 թվականին իրականացրել է հետևյալ գործառույթները։

2008 թվականի ընթացքում տարածքային կառավարման նախարարություն ստացվել և մշակվել են 12136 մտից փաստաթուղթ։ Նույն ժամանակահատվածում նախարարությունից առաքվել է 8629 ելից փաստաթուղթ։

Տարածքային կառավարման նախարարության աշխատակազմում մինչև 2008 թվականի օգոստոսի 19-ը փաստաթղթաշրջանառությունն իրականացվել է ՀՀ կառավարության կողմից մշակված գործավարության համակարգչային լոկալ ծրագրի միջոցով։ Այդ ժամանակահատվածում իրականացվել է 7206 մտից փաստաթղթերի գրանցում, որից գրություններ՝ 4166, դիմումներ՝ 3040։ Նույն ժամանակահատվածում իրականացվել է 4750 ելից փաստաթղթերի առաքում, որից գրություններ՝ 2505, դիմումներ՝ 2245։

2008 թվականի օգոստոսի 19-ից հետո աշխատակազմում անցում է կատարվել փաստաթղթաշրջանառության «Mulberry» էլեկտրոնային համակարգին, որի միջոցով մինչև 2008 թվականի ավարտը իրականացվել է 4930 մտից և 3879 ելից փաստաթղթերի գրանցում։

2008 թվականի հուլիսի 24-ին ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի N 36-Ա հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունում քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման կարգը։ Մինչև 2008 թվականի ավարտը իրականացվել է 62 քաղաքացիների ընդունելություն։

ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմը հաշվետու ժամանակաշրջանում մշակել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել ՀՀ օրենքների 8, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների 197 նախագծեր։

Նախարարության գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է եղել.

Տարածքային կառավարման բնագավառ

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.2 հոդվածի՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատվել են ՀՀ

մարզերի համայնքներում 2008 թվականին ֆինանսական և վարչական վերահսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրերը։

Հավաքագրվել և ամփոփվել են 2008 թվականին ֆինանսական և վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրերի կատարման վերաբերյալ ամփոփ հաշվետվությունները՝ եռամսյակային և տարեկան կտրվածքով։

Իրավական հսկողություն է իրականցվել ՀՀ մարզպետների և Երևանի քաղաքապետի ընդունած գերատեսչական իրավական ակտերի նկատմամբ և անհրաժեշտ առաջարկություններ են ներկայացվել դրանք «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխանեցնելու վերաբերյալ։

Սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել ՀՀ մարզպետների կողմից ներկայացված թվով 17 որոշումների նախագծեր։

Իրականացվել են ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 6-ի «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում Հայաստանի Հանրապետության բաժնեմասի ավելացման միջոցառումների մասին» թիվ 1279-Ն որոշման կատարումն ապահովող անհրաժեշտ միջոցառումներ։

ՀՀ կառավարության աշխատակազմ անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի թիվ 641-Ն որոշմամբ հաստատված «1988 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների ծրագրի» իրականացման ընթացքի վերաբերյալ։

Իրականացվել են ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի կողմից ՀՀ մարզերում անցկացված խորհրդակցությունների արձանագրությունների հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և տրված հանձնարարականների կատարման հսկողությունը։

Իրականացվել են տարածքային կառավարման մարմինների մասով 2007-2008 թվականների ընթացքում ընդունված ՀՀ կառավարության որոշումների կատարման արդյունքների ամփոփման աշխատանքները։

2008 թվականի ընթացքում նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «ՀՀ մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը։ Փաստաթուղթը կնպաստի մեկ կարևորագույն խնդրի լուծմանը, այն է՝ տարածքային համաչափ զարգացմանը, դրան ուղղված պլանավորման գործընթացների միասնականացմանը, բյուջետային ու այլ՝ ներգրավված միջոցներ ապահովելու ուղիների

նախանշմանը: Այս խնդիրը որպես գերակայություն է սահմանվել ՀՀ կառավարության ծրագրում:

ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24–ի N 870-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 142-րդ կետի և N2-ի 7-րդ կետի պահանջների կատարման նպատակով ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերի 2009-2011թթ. զարգացման ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ Շիրակի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերում ՀՀ կառավարության արտագնա նիստերի անցկացման նպատակով շահագրգիռ պետական կառավարման մարմիններից ստացվել և ամփոփվել է համապատասխան տեղեկատվություն, որի արդյունքում ձևավորվել են արտագնա նիստերի օրակարգերը:

2009 թվականի պետական բյուջեյի նախագծի կազմման հիմքում տարածքային կառավարման նախարարության համար որոշիչ է եղել ՀՀ Նախագահի նախընտրական և ՀՀ կառավարության գործունեության ծրագրերով հայտարարված տարածքային համաչափ զարգացման գերակայությունը:

Տարածքային համաչափ զարգացման համատեքստում նախարարությունը վերլուծել է 2009թ. ՀՀ պետական բյուջեի նախագիծը տարածքային կտրվածքով՝ ըստ ոլորտների նախատեսված ներդրումները համեմատելով տվյալ ոլորտին բնորոշ ցուցանիշների և տվյալ տարածքի բնակչության թվաքանակի հետ: Նմանատիպ աշխատանքներ կատարվում են առաջին անգամ: Մշակվել և պետական մարմինների հետ համաձայնեցվել է ոլորտները բնութագրող ցուցանիշների համակարգ, որը նախատեսվում է նարկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ նախարարության կողմից իրականացվել է ուսումնասիրություն հանրակրթական դպրոցների տեխնիկական վիճակի և վերջին 10 տարվա ընթացքում իրականացված կապիտալ ներդրումային քաղաքականության վերաբերյալ: Խնդիր էր դրված ունենալ ամբողջական պատկեր հանրակրթության ոլորտում շենքային պայմանների մասին: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են ցուցանիշների ակնհայտ տարբերություններ: Մասնավորապես, հանրակրթական դպրոցներում մեկ աշակերտի հաշվով կապիտալ ներդրումները տարբերվում են. օրինակ, Վայոց ձորի մարզում մեկ աշակերտի հաշվով դրանք կազմել են 288.0 հազ. դրամ, 148.0 հազ. դրամ հանրապետական միջինի նկատմամբ, իսկ Արարատի մարզի նույն ցուցանիշը 87.0 հազ. դրամ է:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից հատուկ ուսումնասիրվել են 2008թ. ինն ամիսների ընթացքում այն համայնքների սեփական եկամուտների (մասնավորապես՝ հողի հարկի և գույքահարկի) հավաքագրման մակարդակները, որոնցում 2009թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել են իրականացնել կապիտալ ներդրումներ։

Կատարված վերլուծության համաձայն, 2009թ. ՀՀ պետական բյուջեյի կառավարության ներկայացված նախագծով նախատեսվել է ներդրումներ իրականացնել 228 համայնքներում, որից 32-ում 2008թ. ինն ամիսների ընթացքում սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը կազմել է մինչև 30%, 52-ում՝ այն տատանվում է 30-50%-ի սահմաններում, 74-ում՝ 50-75%-ի սահմաններում և 70-ում՝ ապահովվել է 75%-ից բարձր հավաքագրման մակարդակ։

Հաշվի առնելով այս հանգամանքը ներկայումս քննարկվում է նպատակային սուբսիդիաների տրամադրումը և պետական միջոցների հաշվին իրականացվող կապիտալ ներդրումները, տեղական ինքնակառավարման մարմնի գործունեության արդյունավետության հետ՝ մասնավորապես սեփական եկամուտների հավաքագրման մակարդակի հետ կապելու հնարավորության և մեխանիզմների հարցը։

Տեղական ինքնակառավարման բնագավառ

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի օրենսդրական դաշտի բարեփոխումների նպատակով, որը ներառում է նաև եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Հայաստանի Հանրապետության - Եվրոպական Միության գործողությունների ծրագրով նախատեսված 2008թ. ընթացքում իրականացվելիք առաջնահերթությունների և միջոցառումների ցանկի տեղական ինքնակառավարման մասով ՀՀ պարտավորությունները, նախարարության կողմից նախաձեռնվել են մի շարք օրենքների և հայեցակարգերի մշակման աշխատանքներ, մասնավորապես՝

1. Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխությունների համաձայն՝ Երևան քաղաքը պետք է ունենա համայնքի կարգավիճակ, ուստի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ինչպես նաև այդ օրենքի նախագծի հետ թղթակցվող ևս 22 օրենքների նախագծեր։

Նշված օրենքի նախագծի մշակման ժամանակ, բացի ՀՀ Սահմանադրությամբ Երևանի կարգավիճակը ամրագրող դրույթներից, հաշվի են առնվել նաև 1985 թվականի հոկտեմբերի 15-ի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի պահանջները, ինչպես նաև՝ սույն ոլորտին առնչվող միջազգային փորձագետների կարծիքները։

ՀՀ Ազգային Ժողովի կողմից 26.12.2008 թ. նշված օրենքներն ընդունվել են երրորդ ընթերցմամբ։

2. Ֆինանսական համահարթեցման գործում առկա բազմաթիվ բացերն ու թերություն-ները շտկելու և հարկերից գոյացող բյուջետային միջոցները նպատակային բաշխելու միտումն առաջացրեց նոր օրենք մշակելու անհրաժեշտություն։ Ելնելով վերոնշյալից, ֆինանսական համահարթեցման համակարգի կատարելագործման նպատակով նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծը (ՀՀ կառավարության 18.09.2008թ արտագնա նիստում հավանության է արժանացել և ներկայացվել է ՀՀ ԱԺ – քննարկմանը)։

3. ՀՀ Սահմանադրության 2005թ. բարեփոխումների արդյունքում տեղական ինքնակառավարման համակարգում սահմանադրորեն ամրագրվեցին որոշակի փոփոխություններ, որոնց թվում կարեւոր տեղ ունի «տեղական հարկեր» նոր հասկացությունը։

Սահմանադրական բարեփոխումների տեսանկյունից ելնելով, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամտային մասի աճի նպատակով՝ նախարարության կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետությունում տեղական հարկերի հայեցակարգը, որը կնպաստի ՀՀ համայնքներում տեղական հարկերի ինստիտուտի ձեւավորմանն ու զարգացմանը, և որը ՀՀ կառավարության 18.09.2008թ արտագնա նիստում հավանության է արժանացել։

Հայեցակարգի ընդունմամբ առաջանում է գործող օրենսդրության փոփոխությունների եւ նոր օրենքների մշակման անհրաժեշտություն։ Այդ կապակցությամբ նախարարության կողմից մշակվել են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնք հավանության են արժանացել ՀՀ կառավարության 18.12.2008թ արտագնա նիստում։

4. Նախարարությունը կարևորելով համայնքների խոշորացումը և միջհամայնքային միավորումների ստեղծումը, մշակել է «Միջհամայնքային միավորումների ձևավորման և համայնքների խոշորացման հայեցակարգային մոտեցումները» որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 18.12.2008թ արտագնա նիստում

Տեղական ինքնակառավարման բարեփոխումների շրջանակներում մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել մոտ 81 ՀՀ կառավարության որոշման նախագծեր։

Համայնքային ծառայության բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն ՀՀ գնումների գործակալության միջոցով սահմանված կարգով 2008 թվականին առաջին վերապատրաստման շարունակական գործընթացը կազմակերպելու և իրականացնելու նպատակով ընտրվել է համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վերապատրաստում անցկացնող կազմակերպություն։ Ընտրված կազմակերպության հետ համատեղ մշակվել է վերապատրաստում անցկացնելու պլան-գրաֆիկը և նախարարության կողմից համակարգվել է վերջինիս կողմից իրականացվող աշխատանքները։ Արդյունքում ՀՀ մարզերում և Երևան քաղաքում 2008 թվականի ընթացքում վերապատրաստվել են թվով 2371 համայնքային ծառայողներ (Երևանում՝ 488, մարզերում՝ 1883)։ Համայնքային ծառայողների առաջին վերապատրաստման գործընթացի ավարտական փուլը կիրականացվի 2009 թվականին։

Նախարարության կողմից կազմվել է համայնքային ծառայողների ատեստավորման, ինչպես նաև համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթների թեստավորման փուլի անցկացման համար անհրաժեշտ համակարգչային ծրագիրը և մշակվել են հարցաշարերը՝ ըստ համայնքային ծառայության պաշտոնների խմբերի։ Նշված ծրագիրը և հարցաշարերը, խորհրդատվության կարգով մարզպետարանների միջոցով տրամադրվել են ՀՀ բոլոր համայնքներին։

2008 թվականի մայիս ամսից սկսվել են համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթները։ Հայտարարված և անցկացված մրցույթներից կայացել են 536-ը։

2008 թվականի ապրիլ ամսից սկսվել է համայնքային ծառայողների առաջին ատեստավորման գործընթացը: Համայնքային ծառայության առաջին վերապատրաստումն անցած 3930 համայնքային ծառայողներից ատեստավորվել են 2016-ը (շուրջ 51 %):

Հայաստանի Հանրապետությունում համայնքային ծառայության 6688 պաշտոններից համալրված են շուրջ 82 տոկոսը:

Համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից ուսումնասիրություններ են կատարվել 51 համայնքներում: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ մարզպետներին և համայնքների ղեկավարներին են ներկայացվել հայտնաբերված թերությունները և դրանց վերացման համար անհրաժեշտ առաջարկություններ ու պարզաբանումներ: Ուսումնասիրություններին զուգահեռ, ըստ տարածաշրջանների, կազմակերպվել են խորհրդակցություններ համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվել են ընդհանուր և առանձին բարձրացված խնդիրներ, ներկայացվել են դրանց լուծման ուղղությունները, մատուցվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

Ուսումնասիրելով համայնքային ծառայության համակարգի ներդրման առաջնային փուլի դժվարությունները, որոնք մեծապես կապված են մի շարք հարցերին օրենսդրական լուծումներ առաջադրելու անհրաժեշտության հետ, մշակվել են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք սահմանված կարգով ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ են մտել 2008 թվականի դեկտեմբերի 5-ից: Համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև օրենքից բխող 5 նորմատիվ իրավական ակտերում, որոնք սահմանված կարգով ստացել են պետական գրանցումներ: Օրենսդրական մի շարք փոփոխություններին միասնական լուծումներ առաջադրելու նպատակով մշակվել են համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի օրինակելի տարբերակներ, որոնք առաջիկայում կտրամադրվեն ՀՀ բոլոր համայնքների ղեկավարներին:

Նախարարությունում վարվում է համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների շտեմարան, որն ըստ էության արտացոլում է համայնքային ծառայության

ներդրման ընդհանուր պատկերը: Շտեմարանի տվյալները պարբերաբար թարմացվել են ՀՀ մարզպետարաններից ստացվող տեղեկատվությամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ

ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացման մակարդակի բարձրացման նպատակով կազմվել է ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացմանն ուղղված աշխատանքների կատարման ժամանակացույց և իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- սպասարկվել է www.mta.gov.am ինտերնետային կայքը,

- իրականացվել են նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի կատարելագործման և բարելավման ուղղությամբ աշխատանքներ, պարբերաբար կատարվել են ինտերնետային կայքի թարմացման աշխատանքներ,

- իրականացվել են նախարարության տեղեկատվական ռեսուրսների անվտանգության ապահովման և հակավիրուսային պաշտպանության, ինչպես նաև նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներում լոկալ ցանցի սպասարկման և զարգացման աշխատանքները,

-իրականացվել է նախարարության տեղեկատվական ռեսուրսների օգտագործման վերլուծություն,

-իրականացվել է «Mulberry» գործավարության էլեկտրոնային համակարգի շահագործումը,

- պետական հատվածի արդիականացման ծրագրի (ՊՀԱԾ) շրջանակներում՝ Երևանի 12 թաղային, ՀՀ 48 քաղաքային և 157 գյուղական համայնքներին է տրամադրվել համակարգչային տեխնիկա (սերվերներ, համակարգիչներ, տպիչ սարքեր, սկաներներ և անխափան սնուցման սարքեր), որը նախատեսված է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) տեղադրման և հետագա շահագործման համար: Վերոնշյալ համայնքների մեծ մասին տրամադրված համակարգիչներում տեղադրվել են ՀԿՏՀ-ն, աշխատանքային գործընթացի համար անհրաժեշտ ստանդարտ ծրագրային ապահովման փաթեթները և հակավիրուսային ծրագրերը: ՔԿԱԳ 54 տարածքային բաժիններին, որոնք նույնպես ներառված են ՊՀԱԾ-ում, տրամադրվել է համակարգչային տեխնիկան և այդ բաժինների գործառույթները ավտոմատացնող տեղեկատվական

համակարգը։ Կատարելագործվել և բարելավվել են ՀԿՏՀ-ն և ՔԿԱԳ տարածքային բաժինների համար ստեղծված համակարգերը։ Աշխատանքներ են իրականացվել նկատված վրիպակները և սխալները ուղղելու, ինչպես նաև տեղերից ստացված առաջարկությունների հիման վրա համակարգում լրացումներ և փոփոխություններ կատարելու ուղղությամբ։ ՀԿՏՀ համալրվել է նոր ենթահամակարգերով (Համայնքային գույքի կառավարման ենթահամակարգ, Ֆորում)։

- մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացման ռազմավարական ծրագիրը,

- կազմակերպվել են գույքահարկի և հողի հարկի հաշվառման և հավաքագրման տեղեկատվական ավտոմատացած համակարգի՝ ՏԿ նախարարությունում և մարզպետարաններում տեղադրվելիք հավաքական էլեկտրոնային շտեմարանների մշակման և տեղադրման աշխատանքները,

- ՀՀ Կենտրոնական բանկի աշխատակիցների հետ համատեղ տարվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության գործառույթների նկարագրության և դրանցում պարունակվող ռիսկերի գնահատման աշխատանքները,

- 2008թ. հոկտեմբերին վարչությունը «Դիջիթեք-2007» տեղեկատվական հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսին ներկայացրել է ՀԿՏՀ համակարգը։

Ֆինանսական բնագավառ

2008 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարի աշխատակազմի մասով պահպանման ծախսերով նախատեսվել է ֆինանսավորել 72207.5 հազ.դրամ։ Հոդվածային վերաբաշխումների արդյունքում տարեկան բյուջեն կազմել է 66760.4 հազ.դրամ, որից ծախսը կազմել է 63502.77 հազ.դրամ և բյուջեի մնացորդը կազմել է 3257.63 հազ.դրամ։

ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի մասով պահպանման ծախսերով նախատեսվել է ֆինանսավորել 357722.0 հազ.դրամ։ Հոդվածային վերաբաշխումների արդյունքում տարեկան բյուջեն կազմել է 313256.9 հազ.դրամ, որից ծախսը կազմել է 305719.86 հազ.դրամ և բյուջեի մնացորդը կազմել է 7537.038 հազ.դրամ։

2008թվականի պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորում

հազ.դրամ

Հ/Հ	Ծրագրի անվանումը	2008թ. պետ.բյուջեով նախատեսված	Ծախս
1.	Համայնքային ծառայողների վերապատրաստում	46832.2	43333.5
2.	Փախստականների սոց. խնդիրների լուծման միջոցառումներ	14000.0	12096.2
3.	Փախստականներին և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվական ծառայությունների գնման գծով ծրագրի շրջանակներում պետական աջակցություն «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ին	35473.3	35473.3
4.	Պետական աջակցություն «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ին	9663.8	7536.6
5.	Փախստականի կարգավիճակ հայցողին տրվող միանվագ նպաստ	500.0	0
6.	Պետական աջակցություն «Հայաստանի ազգային արխիվ » ՊՈԱԿ-ին	346605.4	320328.6
7.	Պետական աջակցություն «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն » գործակալության ՊՈԱԿ-ներին	372883.4	310736.2

2008 թվականի պետական բյուջեով Պետական աջակցություն «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին ծրագրով «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսված 71018.3 հազ.դրամից, ֆինանսավորվել է 44741.5 հազ.դրամ:

ՀՀ Կառարավարության 2008 թվականի հոկտեմբերի 2-ի N 1155-Ա որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարության «Ճանապարաշինություն» ծրագրի իրականացման գրասենյակ» և «Դպրոցաշինություն» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկների՝ 2008թվականի սեպտեմբեր - դեկտեմբեր ամիսների պահպանման ծախսերի ֆինանսավորման համար՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը հատկացված 46823.6 հազ.դրամը ֆինանսավորվել է ամբողջովին:

Միգրացիայի և փախստականների բնագավառ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալությունը 2008 թվականի ընթացքում իր գործունեությունը ծավալել է ՀՀ կառավարության կողմից հաստատված կանոնադրության համապատասխան՝ իրականացնելով իրեն վերապահված գործառույթները: Աշխատանքները կազմակերպվել են տարեկան աշխատանքային ծրագրին համապատասխան:

Գործակալության կողմից սահմանված ժամկետներում պատրաստվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել առաջարկություններ միգրացիայի ոլորտում ՀՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և 2008 թվականի գերակա խնդիրների, ՀՀ կառավարության գործունեության ծրագրի կատարումն ապահովող 2008-2012 թթ միջոցառումների ցանկի՝ միգրացիայի ոլորտի ծրագրային դրույթների իրագործմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

ՀՀ կառավարություն ներկայացնելու նպատակով 2008 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել ներքոհիշյալ օրենսդրական ակտերի նախագծերը.

- «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- «Արտագնա աշխատանքների կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- «1988-1992թթ. Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերից ներքին տեղահանված անձանց իրենց ծագման բնակավայրերը վերադարձի կազմակերպման ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նշված օրենսդրական ակտերից ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008թ.-ի նոյեմբերի 27-ին ընդունվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը:

ՀՀ կառավարության 2008թ.-ի սեպտեմբերի 25-ի նիստի թիվ 39 արձանագրությամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերից ներքին տեղահանված անձանց իրենց ծագման բնակավայրերը վերադարձի կազմակերպման» ծրագիրը, որով նախատեսվում է աջակցել ներքին տեղահանված անձանց 1005 ընտանիքի իրենց հիմնական բնակության վայրեր վերադառնալու հարցում:

Հաշվետու ժամանակաշրջանում սկսել է գործել օտարերկրյա պետություններում բնակվող մեր հայրենակիցների հայրենադարձությունը խթանող համակարգը, որի միջոցով այդ անձինք էլեկտրոնային կապի հաղորդուղիներով կարող են անմիջականորեն կապվել Հայաստանի պետական կառավարման համապատասխան մարմինների հետ և ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները: Համակարգը գործում է **www. backtoarmenia.am /com** հասցեով:

Համակարգի շահագործումից անցած մի քանի ամիսների ընթացքում համակարգին են դիմել մոտ 200 անձինք: Դատելով դիմողների արձագանքից, այսպիսի ծառայության մատուցումը խիստ պահանջարկված է:

Կայք- էջի հասցեն որպես հղում իրենց կայքում տեղադրելու խնդրանքով գրություններ են ուղարկվել 23 պետական և ոչ պետական մարմինների և 32 լրատվամիջոցների:

Հայաստանի Հանրապետությունից ծնունդ առնող անօրինական միգրացիայի դեմ պայքարելու նպատակով, հաշվետու ժամանակաշրջանում.

- շարունակվել են աշխատանքները բնակչության շրջանում տեղեկատվության տարածման միջոցով անօրինական միգրացիան կանխարգելելու ուղղությամբ,
- ռեադմիսիոն համաձայնագրեր են կնքվել Բուլղարիայի և Շվեդիայի հետ, համանման համաձայնագրերի կնքման շուրջ բանակցությունները շարունակվել են Ռումինիայի, Չեխիայի, Էստոնիայի, Կիպրոսի, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի հետ,
- շարունակվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակի հետ համատեղ իրականացվող Շվեյցարիայից վերադարձող ՀՀ քաղաքացիների ռեինտեգրման աջակցության ծրագիրը, որի նպատակն է օգնել վերադարձող քաղաքացիներին փոքր բիզնես հիմնադրելու, երեխաների կրթության և այլ սոցիալական հարցերում: Առ այսօր ծրագրի արդյունքում Հայաստան է վերադարձել 52 անձից բաղկացած 22 ընտանիք,
- շարունակվել են գործակալությունում գործող մշտական բնակության նպատակով ՀՀ վերադարձած անձանց խորհրդատվական աջակցման և հեռախոսային «թեժ գիծ» ծառայության աշխատանքները: Առ այսօր ծրագրի աջակցությանն են դիմել 1675 մարդ:

Թրաֆիկինգի դեմ պայքարին ուղղված աշխատանքները ծավալվել են 2007 թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված Ազգային Ծրագրին համապատասխան:

Երևանում, Գյումրիում և Արտաշատում բացվել են միգրանտներին օժանդակող տեղեկատվական կենտրոններ: 2008 թ. մայիսին հայկական պատվիրակությունն այցելել է Արաբական Միացյալ Էմիրություններ: Այցելության ընթացքում պայմանավորվածության ձեռք բերման արդյունքում արաբական կողմին է ներկայացվել թրաֆիկինգի դեմ պայքարի հարցերով համագործակցության և փոխըմբռնման հուշագրի մեր կողմից մշակված նախագիծը:

Գործակալությունն ակտիվ մասնակցություն է ունեցել 2007 թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ վարչապետի N 861-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման /թրաֆիկինգի/ հարցերով Խորհրդի աշխատանքներին, որը ղեկավարվում է ՀՀ փոխվարչապետի կողմից: Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և ՀՀ վարչապետի կողմից հաստատվել է Խորհրդի աշխատակարգը: Կայացել է Խորհրդի 2 նիստ, հրավիրվել 2 խորհրդակցություն:

Ինչպես և նախորդ տարիներին, յուրաքանչյուր ամիս ամփոփվել և վերլուծվել են Հայաստանից մեկնող և Հայաստան մուտք գործող անձանց թվաքանակի վերաբերյալ համապատասխան գերատեսչություններից ստացված տվյալները, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ ազգային

վիճակագրական ծառայություն, ՀՀ կենտրոնական բանկ, ինչպես նաև շահագրգիռ այլ կազմակերպությունների:

2008թ.-ի 11 ամիսների տվյալները ցույց են տալիս, որ հիմնականում պահպանվել են միգրացիոն հոսքերին բնորոշ առանձնահատկությունները.

- **ուղևորահոսքերի ծավալների աճ**
- **ցամաքային ճանապարհներով սահմանահատումների թվի աճ**
- **միգրացիոն սալդոի տատանում զերոական մակարդակի շրջակայքում:**

2008 թվականին փախստականների հետ տարվող աշխատանքները հիմնականում նպատակաուղղված են եղել նրանցից ամենակարիքավորներին ժամանակավոր կացարաններում տեղավորմանը, ինչպես նաև սոցիալական բազմաբնույթ խնդիրներին հնարավոր լուծում գտնելուն, հասարակության մեջ փախստականների ինտեգրմանը, ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու գործընթացներին աջակցությանը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակական աշխատանքներ են տարվել ՀՀ կառավարությանն առընթեր պետգույքի կառավարման վարչության հետ՝ կապված Գործակալության և այլ գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող հանրակացարաններում բնակվող փախստական ընտանիքների կողմից զբաղեցրած տարածքների սեփականաշնորհման հետ: 2008թ. փախստական 32 ընտանիքներ օգտվել են այդ գործընթացից:

Փախստական 54 ընտանիք հաշվետու ժամանակաշրջանում նախարարությունում ստեղծված աշխատանքային խմբի միջոցով տեղավորվել են նախարարության «Հանրակացարաններ» ՓԲԸ-ի տնօրինության հանրակացարաններում:

2008թ. ընթացքում ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերել 733 փախստական: Մինչև այժմ ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերել Ադրբեջանից բռնագաղթած ավելի քան 75 հազ. փախստական:

Հաշվետու ժամանակաշարջանում օտարերկրյա պետությունների (Վրաստանի, Իրաքի, Իրանի Իսլամական Հանրապետության, Թուրքիայի, Շրի Լանկայի) քաղաքացիներից ստացվել են Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին 205 դիմումներ, որոնցից 190-ը դիմել են ժամանակավոր ապաստանի, իսկ 15-ը փախստականի կարգավիճակ տրամադրելու խնդրանքով: Փախստականի կարգավիճակ է տրվել է 3 անձի, մյուսների դիմումները մերժվել են: Ժամանակավոր ապաստան է տրվել 68 անձի, իսկ 122-ի դիմումները, որոնք Վրաստանի քաղաքացիներ են, գտնվում են քննարկման փուլում:

Ավելացվել է ապաստան հայցողների համար նախատեսված «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի կարողությունները, այդ նպատակով վերանորոգվել և կահավորվել է ևս 27 լրացուցիչ սենյակ՝ նախատեսված 45 ապաստան հայցողների համար:

ՄԱԿ ՓԳՀ-ի միջոցներով Իրաքից ապաստան հայցողների համար վերակառուցվել է Մասիսի շրջ. Դարբնիկ գյուղի նախկին գյուղատնտեսական քոլեջի շենքը՝ 47 կահավորված սենյակներով, որոնցում կտեղավորվեն Իրաքից ապաստան հայցողները: Նույն նպատակի համար վերակառոցվել է նաև Նոր-Նորքի Մոլդովական 70/1 հասցեի հանրակացարանի 3-րդ հարկը՝ 22 կահավորված սենյակներով:

Սահմանված կարգով ու ժամկետներում կատարվել կամ ընթացք է տրվել գործակալության հասցեով ստացված հանձնարարականներին, գրություններին, նամակներին և դիմումներին:
Հաշվետու ժամանակաշրջանում գործակալությունում ստացվել է 2220 դիմում: Վերադաս մարմիններից ստացվել է 509 հանձնարարական, որոնց պատասխանվել է սահմանված ժամկետներում: Այլ կազմակերպություններից, ստացվել է 395 գրություն:

Գործակալության գործունեությունը պարբերաբար լուսաբանվել է զանգվածային լրատվական միջոցներով: Կազմակերպվել են հեռուստահաղորդումներ ՀՀ տարբեր հեռուստաընկերությունների ալիքներով, ինչպես նաև հանրապետական ռադիոյի տարբեր ծրագրերով: Հրապարակվել են հոդվածներ տարբեր օրաթերթերում և շաբաթաթերթերում:

2008թ. ընթացքում լուծում չստացած հիմնահարցեր

2008թ. էական առաջընթաց չի արձանագրվել ՀՀ ԱԺ կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության 2008թ. ապրիլի 28-ի N 380-Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրում ամրագրված ներքոհիշյալ հարցերում.

1. 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստականների բնակարանային ապահովության հիմնահարցի լուծում.

2008թ. ընթացքում առավել կարիքավոր փախստական ընտանիքներին չեն տրամադրվել բնակարանների գնման-վկայագրեր, իսկ 2009թ. համար այդ նպատակով ՀՀ պետական բյուջեում նախատեսված է 815 մլն դրամ, մինչդեռ ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագիրը ամբողջությամբ իրականացնելու համար նախնական հաշվարկներով պահանջվում է շուրջ 14 մրդ դրամ:

2. Աշխատանքային էմիգրացիայի երևույթի օրենսդրական կանոնակարգում, աշխատանքային էմիգրանտների իրավունքների և օրինական շահերի պետական պաշտպանության իրականացում.

Այդ նպատակով գործակալության կողմից մշակվել և շահագրգիռ համապատասխան մարմինների հետ համաձայնեցնելով նախարարություն է ներկայացվել «Արտագնա աշխատանքների կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանից ելքի և Հայաստան մուտքի ընթացքում ծագող հարաբերությունների օրենսդրական կարգավորում.

Նշված դրույթի ապահովման համար Գործակալության կողմից մշակվել և սահմանված կարգով նախարարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Վերոգրյալ երկու օրենքների քննարկման և ընդունման հարցում որևէ առաջընթաց չկա: Նշված երկու օրենքների նախագծերի քննարկումը չի ընդգրկվել նաև ՀՀ կառավարության 2009թ. գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում:

Արխիվային գործ

1.Արխիվային փաստաթղթերի պահպանության ապահովում և հաշվառում

1.1. Արխիվային փաստաթղթերի ֆիզիկական-տեխնիկական վիճակն ու պահպանությունը բարելավելու նպատակով նախատեսված փաստաթղթերի (թղթե հիմքով) վերականգնման-վերանորոգման առաջադրանքն իրականացվել է 106,9, գործերի կարում-կազմապատմանը՝ 99,1, իսկ դրանց արկղավորման նախապատրաստման (կապոցավորման) ու արկղավորման ծրագրային ցուցանիշները՝ համապատասխանաբար 266,7 ու 59,8 % -ով: Գործերի արկղավորման տարեկան առաջադրանքի թերակատարումը պայմանավորված է պահպանական այդ միջոցների պահանջվող քանակությունը չունենալու իրողությամբ:

1.2. Գործերի առկայության ու վիճակի ստուգման և նիշավորման ծրագրերն ի կատար են ածվել որոշակի թերացումներով (համապատասխանաբար՝ 50,7% և 76,3%), ինչն էապես հետևանք է գործերի ակնհայտորեն մեծ ծավալով համալրման (արխիվ պահպանության ընդունման) և դրանց հետ բազմաբնույթ աշխատատար գործընթացների իրականացման: Արխիվի ապահովագրական ֆոնդի նեգատիվ ժապավենների վիճակի ստուգման ու պրոֆիլակտիկ մշակման ծրագրային ցուցանիշն իրականացվել է ամբողջությամբ (100,2 %), իսկ արխիվային փաստաթղթերի թերթերի համարակալման ու գործերի ախտահանման առաջադրանքները գերակատարվել են համապատասխանաբար՝ 6,6 և 36,2 %-ով:

1.3. Սահմանված կարգին համապատասխան իրականացվել է տարվա ընթացքում արխիվ պահպանության ընդունված բոլոր տեսակի փաստաթղթերի և գործերի պետական և կենտրոնացված պետական հաշվառում և հաշվառման հիմնական փաստաթղթերի վարում: Ըստ արխիվի կենտրոնացված պետական հաշվառման փաստաթղթերի ամփոփ տվյալների՝ 01.01.2009թ. դրությամբ Հայաստանի ազգային արխիվում պահպանվում է 6393 արխիվային ֆոնդ՝ 3.364.078 արխիվային գործերով, 333.176 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, ապահովագրական ֆոնդի 12.263.227 կադր միկրոպատճեն և 6.728 միկրոֆիշ:

2. Տեղեկատու-որոնողական համակարգի ստեղծում և կատարելագործում

2.1. Գործունեության սույն ուղղությամբ կանխագծված ծրագրային 7 ցուցանիշներից 5-ը որոշակի համամասնություններով գերակատարվել են, 2-ը՝ թերակատարվել: Չկարգավորված վիճակում արխիվ պահպանության ընդունված թղթե կրիչով (անձնական ծագման) փաստաթղթերի գիտատեխնիկական մշակման առաջադրանքն իրականացվել է 115,2, կինոֆոտոֆոնո փաստաթղթերինը՝ 120,8 %-ով: Հիշյալ ցուցանիշների գծով 2008-ի կատարողականները 2007թվականի արդյունքներից ավելի են համապատասխանաբար 45.014 թերթով և 6.181 պահպանման միավորով:

2.2. Արխիվային գործի ցուցակների վերամշակման ու կատարելագործման առաջադրանքը կատարվել է 138,0 %-ով, իսկ գործընթացում ընդգրկված միավորների քանակի առումով 2008թ. կատարողականը 2007-ի արդյունքը գերազանցում է 29.294 արխիվային գործով:

2.3. Որոշ չափով թերակատարվել է տվյալների էլեկտրոնային շտեմարանի համալրման նպատակով արխիվային փաստաթղթերի քարտագրման (քարտերի կազմման) ծրագիրը (կատարողականը՝ 92,7 %): Հաշվի առնելով նախորդ տարիներին կազմված, բայց համակարգիչ չմուտքագրված քարտային տեղեկատվության առկա ծավալը և դրանց շրջանառության մեջ դրվելու արդիական պահանջի գործնական նշանակությունն ու

հրատապությունը, ուշադրությունը հնարավորինս ավելի սևեռվել է քարտերի (քարտային տեղեկատվություն) համակարգիչ ներառման խնդրի լուծմանը, ինչի արդյունքում այդ գծով տարեկան առաջադրանքի կատարումն ապահովվել է 103,1 %-ով:

2.4. Արխիվային տեղեկատուների (թեմատիկ ցանկեր) կազմման առաջադրանքը կատարվել է 116,6 %-ով: Բացի այդ, հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱ կառուցվածքային (2) և առանձնացված (38-մարզային մասնաճյուղեր, տարածքային ներկայացուցչություններ) ստորաբաժանումների կողմից աշխատանքներ են տարվել (արտածրագրային կարգով) «Նախկին ԽՍՀՄ հիմնարկների, կազմակերպությունների և ձեռնարկությունների անձնակազմին վերաբերող փաստաթղթերի պահպանության տեղի մասին միջպետական տեղեկատուի» համար պահանջվող տվյալների ու տեղեկությունների նախապատրաստման ուղղությամբ: Նախատեսվում է գործընթացն ավարտին հասցնել 2009թվականին:

3. Արխիվային փաստաթղթերի համալրում և փորձաքննությամբ արժեքավորում

3.1. Թղթե կրիչով փաստաթղթերի (գործերի) համալրման ծրագիրը կատարվել է 208,4%-ով (այդ թվում գործավարական՝ 293,2 %-ով, անձնական ծագման՝ 123,2 %-ով): Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի գծով կատարողականը տարեկան առաջադրանքը գերազանցում է շուրջ 4,5 անգամ, ինչը պայմանավորված է «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի (նախկինում՝ Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա) կողմից բավական մեծ ծավալով կինոփաստաթղթերի (5060 պ.մ.) և այլևայլ աղբյուրներից զգալի թվով լուսանկարների (4188 պ.մ.) համալրման պարագայով:

3.2. Արխիվի համալրման աղբյուր և այլ (էապես՝ լուծարված) կազմակերպություններում առկա արխիվային փաստաթղթերի ու գործերի կարգավորման առաջադրանքը կատարվել է 115,6, իսկ ունեցած թղթե կրիչով արխիվային փաստաթղթերի նպատակային և (կամ) ծրագրային համապատասխան աշխատանքների իրականացման ընթացքում (զուգընթացաբար) փորձաքննությամբ արժեքավորման ցուցանիշը՝ մոտ 90,0 %-ով:

3.3. Արխիվի և նրա մասնաճյուղերի փորձագիտական հանձնաժողովների 2008-ին գումարած նիստերում արխիվային գործերի ու փաստաթղթերի (անձնական ծագման և կինոֆոտոֆոնո) ցուցակների քննարկման ծրագրային առաջադրանքը գերակատարվել է շուրջ 4,3 անգամ (433,6 %-ով):

4. Արխիվային փաստաթղթերի օգտագործում և հրապարակում

4.1. Արխիվի համապատասխան բաժինների և 39 առանձնացված ստորաբաժանումների կողմից ժամանակին և հիմնավոր պատասխաններ են տրվել քաղաքացիներից և տարբեր կազմակերպություններից ստացված (այդ թվում՝ արտերկրից) 21.430 (2007թ ցուցանիշից 6293-ով ավելի) թեմատիկ ու սոցիալ-իրավական բնույթի հարցումների (կատարողական՝ 211,2 %):

Հաշվետու տարում արխիվն ունեցել է 548 օգտվող (2007թվականի համեմատ 78-ով ավելի), որոնց պետական արխիվապահոցներից մատակարարվել են շուրջ 33.000 (2007թ. համեմատ 2677-ով ավելի) արխիվային գործեր, թերթերի լրակազմեր, միկրոպատճեններ, կինոֆոտոֆոնո փաստաթղթեր ու անհրաժեշտ այլ արխիվային նյութեր:

4.2. Հաշվետու ժամանակաշրջանում արխիվային փաստաթղթերի օգտագործմամբ նախապատրաստվել ու հեռարձակվել և (կամ) հրապարակվել է 79 ռադիոհեռուստատեսային հաղորդում ու 35 լրագրային հոդված (կատարողականները՝ համապատասխանաբար 282 % և 113 %): Կազմակերպվել է 13 (կատարողական՝ 100%)

թեմատիկ ցուցահանդես՝ էապես կապված տարվա հոբելյանական տարեթվերը, այդ թվում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի, Յա. Զարոբյանի, Վ.Սարոյանի ծննդյան 100-ամյակները, Մայիսյան հերոսամարտերի 90-ամյակը և այլ տարելիցներ նշելու հետ: Երևանում (նաև՝ Կիևում ու Լվովում) կազմակերպվել են «Ուկրաինայի հայ համայնքը. պատմություն և այժմեականություն» (Ուկրաինայի պետական արխիվների հետ համատեղ), իսկ Գյումրիում՝ «Սպիտակի երկրաշարժը» (ՌԴ Մոսկվայի պետարխիվների հետ համատեղ) խորագրով ցուցահանդես-ցուցադրությունները:

4.3. Լույս են ընծայվել «Բանբեր Հայաստանի արխիվների» 2008թ. 2 (հերթական՝ 111,112) համարները, «Հայրենիք-Սփյուռք. կեսդարյա պատմություն», «Սպիտակի երկրաշարժ» խորագրերով փաստաթղթերի ժողովածուները և հրապարակվել է արխիվային փաստաթղթերի 11 հավաքածու՝ նախատեսված 12-ի դիմաց:

5. Միջազգային համագործակցություն

5.1. 2008թ. համագործակցության երկկողմ համաձայնագիր է կնքվել Հայաստանի ազգային արխիվի և Բուլղարիայի Հանրապետության «Արխիվներ» պետական գործակալության միջև:

5.2. Հայաստանի ազգային արխիվի պատվիրակները մասնակցել են Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում՝ Ռուսաստանի արխիվային գործի 90-ամյակին նվիրված միջոցառումներին, ինչպես նաև Արխիվների միջազգային խորհրդի (ԱՄԽ) «Եվրասիկա» տարածաշրջանային բաժանմունքի հերթական՝ 9-րդ կոնֆերանսին և ԱՊՀ անդամ պետությունների պետական արխիվային ծառայությունների ղեկավարների խորհրդատվական խորհրդի նիստին, ՌԴ Կրասնոդար քաղաքում՝ Հայաստանի և Ռուսաստանի արխիվագետների ամենամյա «կլոր սեղան» հերթական հանդիպմանը: Արխիվի տնօրեն և ԱՄԽ «Եվրասիկա» բաժանմունքի նախագահ Ա. Վիրաբյանը մասնակցել է Կուալա-Լումպուր քաղաքում (Մալազիա) կայացած Արխիվների միջազգային խորհրդի 16-րդ վեհաժողովին՝ ընդգրկվելով ԱՄԽ գործկոմի կազմում:

5.3. Հանրապետության արխիվագետների պատվիրակությունը մասնակցել է Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում և Լվով քաղաքում Ուկրաինայի պետական արխիվների և Հայաստանի ազգային արխիվի համատեղ պատրաստած «Ուկրաինայի հայ համայնքը. պատմություն և այժմեականություն» խորագրով ցուցահանդեսի բացման արարողությանը: Արխիվի տնօրենի տեղակալ Ս. Միրզոյանը աշխատանքային գործուղմամբ եղել է ՌԴ Արմավիր, Պյատիգորսկ, Ռոստով քաղաքներում՝ տեղերում հայոց պատմությանը վերաբերող փաստաթղթերի առկայության, պահպանվածության և ձեռքբերման հարցերն ուսումնասիրելու, իսկ բաժնի վարիչ Ս.Մարուքյանը գործուղվել է ՌԴ մայրաքաղաք Մոսկվա՝ Դաշնության արխիվային գործակալության կազմակերպած արխիվային փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորման և համալրման հիմնախնդիրների քննարկման միջազգային ուսուցողական սեմինարին մասնակցելու համար:

6. Տնտեսական գործունեություն

6.1. 2008թ. ընթացիկ և հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել արխիվի N2 մասնաշենքում (փոխվել են արխիվապահոցների նախասրահների լուսամուտները, շենքի դիմացի ցանկապատը), կինոֆոտոֆոնո փաստաթղթերի և ապահովագրական պատճենների մասնաճյուղում (անցկացվել է գազատար, կառուցվել է նոր լոկալ կաթսայատուն և հիմնովին վերակառուցվել ջեռուցման համակարգը, վերանորոգվել են զուգարանները և մի շարք սենյակներ, ասֆալտապատվել է բակը), Արմավիրի և

Գեղարքունիքի մարզային մասնաճյուղերի ու Գորիսի տարածքային ներկայացուցչությունների զբաղեցրած շինություններում:

6.2. ՀՀ կառավարության 2008թ. ապրիլի 4-ի N 500-Ա որոշմամբ անհատույց ու անժամկետ օգտագործման իրավունքով արխիվին են ամրացվել ՀԱԱ Կոտայքի մասնաճյուղի և Արթիկի, Սիսիանի, Մեղրիի, Դիլիջանի ներկայացուցչությունների զբաղեցրած շենք-շինությունները, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող Ճամբարակի, Տաշիրի, Չարենցավանի, Գորիսի, Մասիսի ներկայացուցչությունների զբաղեցրած տարածքների համար կնքվել են անհատուց օգտագործման պայմանագրեր:

6.3. Հաշվետու տարում կազմակերպության ֆինանսական շրջանառությունը կազմել է 522270,1 հազար դրամ, կատարված ծախսերը՝467411,4 հազար դրամ, միջին աշխատավարձը 70,8 հազար դրամ: